

ՆՈՐԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

(հետազոտություն իրավաբանական ապացուցման տեսության հիման վրա և իրավաբանական հետազոտման մեթոդի միջոցով¹)

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ դասախոս

Չնայած հայկական այբուբենի ստեղծման մասին գրվել են ամբողջ հատորներ, դրանց մասին խոսվում է հայ ժողովրդի պատմության բոլոր դասագրքերում, սակայն այդ հարցի պատասխանը մնում է ճշմարտության սահմաններից դուրս և իրենից ներկայացնում կարծիքների պայքարի ոլորտ: Մասնագետների մի մասը համոզված է, որ Ս. Մաշտոցն ընդամենը հայտնաբերել է հին հայկական տառերը, լրացրել և մտցրել է գործածության մեջ: Մի մասն էլ նույնքան անկեղծորեն համոզված է, որ նա հորինել է դրանք²: Այժմ տիրապետող է վերջին կոն-

¹ Տե՛ս *Լոբ Բ.* Теория доказательств. М., 1989. *Симаков Г. Ф.* Основы теории доказательств в уголовном процессе. М., «Проспект», 2002. Պատմական դեպքերը և գրականագիտական աղբյուրները իրավաբանական ապացուցման տեսության հիման վրա ուսումնասիրելու տակ մենք հասկանում ենք ոչ թե քրեադատավարական ապացուցման պրոցեսը և ապացույցների մասին գիտությունը մեխանիկաբար և լրիվորեն պատմական գիտության և գրականագիտության մեջ տեղափոխելը և կիրառելը, այլ միայն դրա որոշակի տարրերի ներմուծումը և այս կարգի ուսումնասիրությունները նույնպես որոշակի նորմի, կանոնի ենթարկելը՝ դրանց բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ հետազոտությունը ապահովելու, օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու նպատակով: Այս ոլորտներում կատարվող հետազոտությունները և որոշակի հետևությունների հանգեցնում նույնպես պետք է կատարվի միայն ձեռք բերված օբյեկտիվ ապացույցների հիման վրա ու տրամաբանական փաստարկման միջոցով, որի ընթացքում պետք է հաշվի առնվի ժամանակի ու տարածության, պատմական դեպքերի, դեմքերի ու աղբյուրների առանձնահատկությունները՝ դրանով իսկ բացառելով ամեն տեսակի «ապացուցում» սուբյեկտիվ, այդ թվում նաև՝ կոնվենցիոնալ կարծիքի, արժեքային գնահատականի ու ցանկության հիման վրա:

² Տե՛ս *Գարեգին Ջարրհանյան*, Հայոց հին դպրություն, Վենետիկ, 1932: *Ի. Հարությունյան*, Հայոց գրերը, Թիֆլիս, 1892: *Ա. Գ. Աբրահամյան*, Հայ գրի և գրչության պատմություն, «Հայպետհրատ», Երևան, 1959: *Ա. Գ. Առաքելյան*, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (1-ին դար մ.թ.ա. – 14-րդ դար), «Հայպետհրատ», Երևան, 1959: *Վ. Խ. Նալբանդյան*, Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը: *Է. Պիվազյան*, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության հարցի շուրջը: *Ս. Սկրյան*, Հինգերորդ դարի հայ պատմագրությունը: // Մեսրոպ Մաշտոց, Հոգևածների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 1963: *Աշոտ Սկրտչյան*, Հինգերորդ դարի հայ դպրություն, Երևան, «Հայաստան», 1968: *Լեո*, Մեսրոպ Մաշտոց, ԵՊՀ հրատ., Երևան, 1962, էջ 62: *Լ. Բատիկյան*, Սկրտիչ էմինը հայ հեթանոսական մշակույթի մասին, Բանբեր Երևանի համալսարանի, N 1, 1974: *Գ. Բ. Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն: Նախագրական ժամանակաշրջան, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1987: *Ս. Աբեղյան*, Հայոց հին գրականության պատմություն վեց հատորից, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ. 1, 1944: *Կորյուն*, Վարք Մաշտոցի, Աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Ս. Աբեղյանի, Երևան, 1962: *Հ. Աճառյան*, Հայոց գրերը, Երևան, «Հայաստան», 1968: *Վ. Սարգսյան*, Հայոց գրերի ծագումը, Երևան, 1999: *Հ. Սարկվաթյո*, Պատմություն հայերեն նշանագրերու և վարուց Ս. Մաշտոցի, Վիեննա, 1913: *Դ. Շևակ*. Месроп Маштоц и создание армянских письмен и словесности. Изд. «Айпетрат», Ереван, 1962. *А. Мартиросян*. Маштоц. Изд. АН Арм. ССР, Ереван, 1998.

վենցիոնալ կարծիքը: Ընդ որում, նրանք բոլորն էլ իրենց հետևություններում հիմնվել են Կորյունի «Վարք Մաշտոցի», Մ. Խորենացու «Հայոց պատմության» և Ղ. Փարպեցու «Հայոց պատմության» վրա: Ավելի ուշ ժամանակի հայ պատմիչների երկերում, ինչպիսիք են Սեբեոսը, Կիրակոս Գանձակեցին, Սամվել Անեցին և ուրիշներ, նույնպես տեղեկություններ կան Մաշտոցի կողմից կատարված գործերի ու հայոց այբուբենի ստեղծման մասին, բայց դրանց աղբյուրն էլ հիմնականում վերոնշված երեք հեղինակներն են:

Պետք է անմիջապես նշել, որ այս բոլոր ուսումնասիրողների հետևությունները թերի են, կատարած հետազոտությունները՝ անկատար, քանզի դրանց մեջ գործնականորեն չեն օգտագործվել համապատասխան գիտական մեթոդներ՝ պատմահամեմատական, էվրիստիկական, վերականգնման, սինխրոն, կորած օղակների վերականգնման, դիախրոն, իրավաբանական հետազոտման և այլն³: Նրանք ծանոթ չեն ապացուցման տեսությանը, որի հետևանքով նրանց աշխատությունները կրում են նկարագրական-հուզական և ոչ թե տրամաբանական-գիտական բնույթ:

Նրանցում հաշվի չեն առնված բազմաթիվ պատմական և պետաիրավական իրողություններ, փաստերին տրված են կամայական բացատրություններ ու գնահատականներ: Անհիմն կերպով և համառորեն պաշտպանվել և պաշտպանվում է այն թյուր պատկերացումը, որ Հին Հայաստանում չի եղել զրադաշտական կրոն, իրավունք, բարոյականություն, էսթետիկա և այլն, այլ եղել է ինչ-որ այլ կրոն, որը նրանք բոլորը կոչում են «հեթանոսական»՝ մոռանալով, որ ամեն մի հեթանոսական կրոն ունի իր անվանումը, ինչպես զրադաշտականը, անտիկ հունականը, հռոմեականը, փյունիկյանը, բուդդայականը և այլն: Ուստի հին հայկականն էլ պետք է անվանում ունենար, քանզի «հեթանոսականը» սեռի և ոչ թե տեսակի անվանում է: Եվ ճշմարտությունը նրանում է, որ նախաքրիստոնեական Հայաստանի կրոնի, իրավունքի, բարոյականության, տնտեսության, քաղաքականության և էսթետիկայի անվանումը եղել է զրադաշտական, ավեստական, և այնտեղ թագավորել է հենց զրադաշտական կրոնը, իրավունքը և այլն, իսկ հին հայերի սուրբ գիրքը եղել է Ավեստան, որն ունի հայկական և ոչ թե պարսկական ծագում, ինչը մենք ապացուցել և շարունակելու ենք ապացուցել⁴: Այսպիսով, հայ ժողովրդից օտարվում է նրա կուլտուրայի մի հսկայական շերտ, ժխտվում նրա նախաքրիստոնեական երկու քաղաքակրթությունների գոյությունը իրենց շղթայի մեջ: Հարց չի տրվում, թե գիր և գրականություն չունեցող ժողովրդի լեզվով 3-րդ դարի վերջում և 4-րդ դարի սկզբում ինչպես հանկարծ կարող էին

³ Տե՛ս **Սամվել Խաչատրյան**, «Համեմատական իրավագիտություն» դասընթացի վերաբերյալ իրավագիտության և այլ ֆակուլտետների մագիստրատուրայի ուսանողների ու դասախոսների համար մեթոդական ցուցումներ: Երևան, «Նահապետ», 2011: **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրական ժամանակաշրջան, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 13-18: **Ս. Ա. Խաչատրյան**, Խոսքով երրորդ Մեծի և Տիրիդատ երրորդ Մեծի թագավորելու ժամանակի հարցը (Քննություն իրավաբանական հետազոտման մեթոդի միջոցով), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 13, 2011: Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. М., 1998, т. 1, с. 21-29.

⁴ Տե՛ս **Խաչատրյան Ս. Ա.**, Տիրիդատ երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Երևան, 2010:

ստեղծվել այնպիսի բարդ, կրոնափիլիսոփայական, իրավաբանական, բարոյագիտական և պատմական բնույթի երկեր, ինչպիսիք են «Հաճախապատում ճառքը» և Ագաթանգեղոսի «Հայոց Պատմությունը»: Ավելին. այդ երկերն արհեստականորեն տարվում են 5-րդ դար, որով անչափելի վնաս են տալիս հայ ժողովրդին, նրա մշակույթին: Այդ կարգի գործողություններից է նաև Մաշտոցին հայոց այբուբենն հորինելը վերագրելը:

Դրա կապակցությամբ պետք է ասել, որ ժամանակին Գ. Լուսավորիչը և Ագաթանգեղոսը իրենց աշխատությունները գրած են եղել հայերեն լեզվով՝ սրբագերծելով Տիր աստծու տաճարում հայտնաբերած Ավեստայի տառերը⁵: Այդ գրքերը հետագայում կորած են եղել, բայց դրանց մասին հուշը պահպանվել է: Մ. Մաշտոցը գործնականորեն սկսել է դրանց որոնումներով զբաղվել միայն «Դանիելյան» կոչվող գրերի հայտնաբերումից հետո: Թագավոր Վառժապուհը Դանիելյան գրերը տեղափոխել է տվել Մեծ Հայաստան, որտեղ դրանցով դպրոցներում կազմակերպվել է ուսուցում: Դրա ընթացքում պարզվել է, որ Դանիելյան այբուբենի կազմը թերի է, ոչ լրիվ: Այդ հանգամանքի երևան գալուց հետո որոշվել է մի նոր պատվիրակություն, այս անգամ՝ Մաշտոցի գլխավորությամբ, ուղարկել Միջագետք, և եթե առաջին անգամ ուղարկվել էր զինվորական, ապա այս անգամ՝ հոգևորական ինտելեկտուալ:

Հարց է ծագում, թե ի՞նչ նպատակներ են դրված եղել այս խմբի առջև: Հարց, որը երբեք տրված չի եղել: Մի կողմ թողնելով Մաշտոցի կողմից Միջագետք գործուղվելու ժամանակի և տևողության, այդ ուղևորությունների քանակի հարցերը, որոնք նույնպես խիստ վիճահարույց են, նրա Միջագետք գործուղվելու իրական նպատակներն ու պատճառները պարզելու համար, ապացուցման տեսության կանոններով պետք է առաջադրել վարկածներ, որոնք կարող են լինել հետևյալ երեքը. 1. Հայաստանում արդեն ուսուցանվող Դանիելյան այբուբենը լրացնելու, կատարելագործելու համար է նա ուղարկվել (և ոչ թե գնացել է) Միջագետք, 2. Նա որոնել է հայերեն մեկ այլ այբուբեն, կամ աղբյուր, որը պարունակում է հայերեն տառեր, կամ հայերեն տառերով գրված հայերեն գրքեր, 3. Նա գնացել է այնտեղ տառեր հորինելու: Այս կապակցությամբ այլ որևէ վարկած առաջադրել, օրինակ՝ այնտեղ գնալ այլ որևէ ազգի այբուբեն հայերենին հարմարեցնելու համար, այնքան էլ խելամիտ չէ, քանի որ այդ կարելի էր անել տանը:

Հավանական է նաև հրաշքի և հանկարծակի պայծառացման վարկածը, բայց դա կարող էր տեղի ունենալ նաև տանը: Ինչ վերաբերում է Միջագետքի դպրոցներում աշակերտներին հունական կամ ասորական կրթության տալու և թարգմանիչներ պատրաստելու վարկածին, ապա պետք է ասել, որ սա Մաշտոցի առաքելության հիմնական նպատակ չի եղել, այլ՝ հարակից: Պետք է նաև նշել, որ ուսուցիչներ հրավիրելն ու տեղում կադրեր պատրաստելն ավելի էժան և հարմար է եղել միշտ, քան այդքան հեռու աշակերտներ ուղարկելը, որը խիստ ծախսատար է: Իսկ եթե ընդունենք, որ նրանք Միջագետք էին ուղարկվել լեզուներ սովորելու, որպեսզի ապագայում թարգմանիչներ դառնան, ապա այս դեպքում հարց է առաջանում, թե ինչպե՞ս կարող էին նրանք թարգմանիչներ դառ-

⁵ Տե՛ս **Խաչատրյան Ս. Ա.**, Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը..., Երևան, 2010:

նալ, հունարենից և ասորերենից հայերեն թարգմանելու մեջ հմտանալ, եթե հայերեն այբուբենը կատարյալ չէր և գրավոր լեզուն դեռևս չկար: Այստեղից կարելի է երեք հետևություն անել. կամ դանիելյան այբուբենով, այնուամենայնիվ, կարելի էր դասավանդել և թարգմանություններ անել, կամ աշակերտները տարված են եղել այլ լեզուներ և Աստվածաշունչ սովորելու, որպեսզի գրագետ հոգևորականներ դառնան, կամ էլ տարվել և տեղաբաշխվել են Միջագետքի տարբեր քաղաքների արխիվներում ու գրադարաններում, բացի ամենայնից, հայկական գրքեր որոնելու և հայկական այբուբենի մասին տեղեկություններ հավաքելու համար:

Ամմիջապես պետք է ասել, որ Մաշտոցի կողմից տառեր հորինելու նպատակով Միջագետք գնալու առաջին վարկածը բացառվում է՝ դրա անհավանական լինելու պատճառով: Մաշտոցի և նրան Միջագետք ուղարկողների նպատակը եղել է Պանիելյան այբուբենը լրացնելը կամ այլ հայկական այբուբեն և դրա աղբյուր գտնելը, որը միանշանակորեն պարզ է դառնում հայ պատմիչների երկերից: Դրանց գոյության մեջ նրանք չեն կասկածել, այդ թվում նաև ինքը՝ Մաշտոցը: Ղ. Փարպեցին գրում է, որ Մաշտոցը ցավով է ընդունել հայկական եկեղեցիներում արարողությունները ասորերեն լեզվով կատարելու փաստը, որի հետևանքով «նա լալիս էր ներսում. **2^ե որ կային հայերեն լեզվի նշանագրեր**, որոնցով հնարավոր էր սեփական ծայնով և ոչ թե մուրացած լեզվով, եկեղեցիներում շահել մարդկանց ...սրտերը»⁶: Ինքը՝ Կորյունը, նույնպես չի հերքում նման այբուբենի գոյությունը՝ գրելով. «Մանավանդ զի և նշանագիրքն իսկ՝ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան»: Մ. Աբեղյանը՝ Կորյունի գրքի իր առաջաբանում բերելով Կորյունի այս խոսքերը, անհաջող կերպով փորձում է դրանց ուրիշ իմաստ և նշանակություն վերագրել⁷, առանց հաշվի առնելու իրողությունը⁸:

Տրամաբանորեն էլ ընդունել, որ հայկական այբուբեն կարելի է հորինել Միջագետքում՝ դրա համար հատուկ կերպով գնալով և ապրելով անընդհատ պատերազմական վիճակի մեջ գտնվող այդ երկրամասի զանազան իջևանատներում, վանքերում, հնարավոր չէ: Տառեր հորինողը կարող էր ապահով նստել իր երկրի որևէ վանքում կամ թագավորական գրադարանում, արխիվում, և հանգիստ պայմաններում աշխատել ու հորինել: Մանավանդ, որ արդեն գտնված էին հայկական տառերի մեծ մասը, և որոնցով Մաշտոցն արդեն երկու տարի ուսուցանել էր եկեղեցուն կից ստեղծված դպրոցներում և գիտեր դրանք, դրանց պակասությունները: Իսկ այն հարցին, թե հնարավոր է արդյոք այբուբեն հնարել որևէ անձի կողմից, ապա պետք է պատասխանել, որ այո, հնարավոր է: Նման աշխատանքի արդյունքներ այն ժամանակ էլ արդեն կային: Ոչ վաղ անցյալում, Շապուհ Երկրորդի ժամանակ, ստեղծվել էր «Պահլավական» կոչված այբուբենը և արդեն կային դրանցով գրված տեքստեր: 7-րդ դարում էլ, պատմությանն ան-

⁶ Տե՛ս **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1982, էջ 31:

⁷ Տե՛ս **Կորյուն**, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ.Աբեղյանի, Երևան, 1962, էջ 16, 100:

⁸ Տե՛ս **Հարությունյան Ի.**, Հայոց գրերը, Թիֆլիս, 1892: **Ա. Գ. Առաքելյան**, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (1-ին դար մ.թ.ա. – 14-րդ դար), Երևան, 1959, էջ 169:

հայտ մնացած գրադաշտական քուրմը, գրավոր Ավեստան վերականգնելու և նորից այն գրառելու համար ստեղծել է յոթ տեսակի այբուբեն⁹։ Կային հունական, փյունիկյան, ասորական, հրեական, լատինական այբուբենները, դրանցով գրված գրքեր, «քերականություն» գիտությունը։ Կար, վերջապես, Դանիելյան այբուբենը և կային նաև հայկական մեհենական գրեր։ Թուրք-թաթարները և շատ այլ ազգեր գիր չեն ունեցել, օգտագործել ու օգտագործում են Կիրիլիցան, լատինական այբուբենը՝ դրանք հարմարեցնելով իրենց լեզվի հնչյունաբանական առանձնահատկություններին։ Յրեական այբուբենն հիմա էլ է թերի ու չի լրացվել ձայնավորներով։ Այն ունի նաև այլ թերություններ, բայց դրացով հանդերձ այժմ էլ օգտագործվում է՝ ճիշտ այն նույն վիճակում, ինչպիսին որ այն եղել է Մովսեսի ժամանակ։ Եվ դրանց օգտագործման հիմնական դժվարությունը այս դեպքում տառերի ու հնչյունների, «սիղոբաների» ու դրանց կապերի մեջ չէ, ինչպես որ բանը ներկայացնում են հայ գրականագետները։

Վերջապես՝ եղել է Դանիելին Վաղարշապատ հրավիրելու, այդ հարցերը նրա հետ և առանց նրա լրացնելու հնարավորություն, բայց բոլոր դեպքերում այդ աշխատանքը կամ տառեր հորինելը, հրաշքով կամ առանց դրա օգնության, ավելի հնարավոր է եղել անել տանը, քան թե Միջագետքի իջևանատներում ու գրադարաններում։ Այբուբենի գործարկման գաղտնիքը և դժվարությունը նման այբուբենը համընդհանուր հայտնի ու գործածման համար պարտադիր դարձնելու մեջ է՝ պետության օրենքի, նորմատիվ հրամանագրի կամ կոնդակի միջոցով։ Այդպես է վարվել Մովսեսը։ Այդպես է վարվել Շապուհ Երկրորդը։ Հայաստանում էլ այդպես են վարվել՝ Դանիելյան այբուբենը կատարելագործելու և պարտադիր դարձնելու համար, և այնտեղ դրա համար եղել է բավարար եկեղեցական և պետական իշխանություն։ Եվ այսպես, Միջագետք գնալը տառեր հորինելու համար վարկածը բացառվում է և մնում են մյուս երկու վարկածները, որոնք էլ ստորև քննարկվելու են։

Ըստ երկրորդ վարկածի՝ Մաշտոցը գործուղվել է Միջագետք՝ Դանիելյան այբուբենը լրացնելու և կատարելագործելու համար, որի հնարավորությունը, առաջին հերթին, կապված է եղել խորհրդավոր Դանիել եպիսկոպոսի հետ։ Միայն Դանիելը գիտեր դրանց ծագման աղբյուրը, իր մոտ դրանց հայտնվելու գաղտնիքը։ Մաշտոցն ուղարկված է եղել Միջագետք ոչ թե ընդհանրապես, այլ՝ Դանիելի մոտ, որպեսզի նրանից լրացուցիչ տեղեկություններ քաղի այբուբենի մասին։ Մի բան, որը թաքցնում է Կորյունը, բայց որի մասին հայտնում է Մ. Խորենացին։ Ուստի բնական է, որ Մաշտոցն իր որոնումներն սկսել է նրանից՝ գնալով նրա մոտ։ Իսկ որտե՞ղ, Միջագետքի ո՞ր մասում են ապրելիս եղել Դանիելը կամ նրա մերձավոր Հաբեը, որտե՞ղ է նրանց կամ նրանցից մեկին հանդիպել Վռամ-շապուհ արքան և իմացել հայոց այբուբենի մասին։ Այդ հարցի պատասխանը չի տվել ոչ ոք, այդ թվում՝ Խորենացին, իսկ նոր ժամանակների հետազոտողները չեն էլ փորձել դա պարզել։ Ամմիջապես պետք է ասել, որ արքան նրանց չէր կարող հանդիպել Եդեսիայում, Ամիդում կամ Սամոսատում, քանզի այդ քաղաքները գտնվում էին Հայկական Միջագետքի այն մասում, որոնք այդ ժամանակ Հռոմեական կայսրության կազմում էին։ Իսկ Միջագետքի ամենամեծ քաղաքը՝ Սծ-

⁹ Стѣи Суждения Духа разума (Дадестан-и меног-и храд). Из кн. Зороастрийские тексты. Памятники письменности Востока.- М., 1997 CXIV.

բինը, գտնվում էր Իրանի կազմում, նրան էր անցել 363թ. իրանահռոմեական պայմանագրով և անմիջականորեն գտնվում էր Իրանի և Հռոմեական կայսրության սահմանի վրա¹⁰: Վաճառակի թագավորն էլ, որն Իրանի թագավորի ենթական էր և իրանական պետության պաշտոնատար անձ էր՝ հայկական զորքով այդ ռեզիդենցիայում էր գնացել Իրանի թագավոր Վաճառակի զորքերի հրամանով, հռոմեացիների հետ Միջագետքի ու Մեծ Հայաստանի բաժանման 363 և 387թթ. կնքած պայմանագրերի խախտման պատճառները պարզելու և խաղաղություն հաստատելու համար և ոչ թե պատերազմելու¹¹: Ուստի նա բնականորեն չէր կարող Ամիդ, Եդեսիա և Սամոսատ գնալ՝ զինված զորքով մտնելով Հռոմեական պետության տարածք: Բացի դրանից, կոնֆլիկտը ծագած է եղել Իրանի և Հռոմեական կայսրության միջագետքյան սահմանի վրա, որին հնարավոր էր մոտենալ միայն Իրանական Միջագետքի տարածքով՝ և անպայման մտնելով Մծբին, որն այդ ժամանակ իրանական Միջագետքի և Արվաստան մարզպանության մայրաքաղաքն էր, իրանական զորքերի կենտրոնակայանը: Միայն այնտեղ էր հնարավոր պարզել կոնֆլիկտի պատճառը և խաղաղություն հաստատել: Ուստի հայոց թագավորը գնացած է եղել Մծբին, որտեղ կամ որի շջակայքում էլ կարող էր հանդիպել Դանիելին կամ Հաբեշին: Քիչ հավանական է, որ պատերազմական իրադրության մեջ, բանակցելու կամ այլ նպատակով նա մտած լինի Հռոմեական պետության տարածք և այցելած լինի Եդեսիա, Ամիդ և Սամոսատ: Եվ քանի որ, ըստ Խորենացու, Մաշտոցը Միջագետք գնալիս նախ հանդիպել է Դանիելին, որից հետո միայն անցել Եդեսիա, ապա կարելի է ասել, որ նա էլ իր Միջագետքյան այցելությունն սկսել է Մծբինից՝ կրկնելով հայոց թագավորի երթուղին: Եթե նա Մծբինով չմտնեք հռոմեական Միջագետք, ապա առաջինը չէր կարող լինել Եդեսիայում, հետո նոր միայն՝ Ամիդում, ինչպես գրում է Կորյունը, քանզի Մծբինն ամենամոտ հռոմեական Միջագետքի քաղաքը Եդեսիան է: Այդ հանգամանքը, թե ինչու նա սկզբում Ամիդ չի մտել, որը Մեծ Հայքին ամենամոտ քաղաքն է, այլ Եդեսիա, որն ավելի հեռու է Մեծ Հայքի սահմանից, մինչև այժմ պարզ չէ: Այդ հարցին ճգնել են պատասխանել Մ. Աբեղյանը և ուրիշներ, բայց այդպես էլ չեն կարողացել որոշակի պատասխան տալ¹²: Մինչդեռ դա պարզաբանման ենթակա պատմական կարևոր հանգամանք է և արդեն կարելի է համարել պարզաբանված:

Ինչ է տվել Դանիելի հետ հանդիպումը Մաշտոցին, պարզ չէ: Ըստ Խորենացու՝ ոչինչ: Բայց խորհրդանշական է, որ դրանից հետո Մաշտոցը ոչ թե դադարեցրել է որոնումները, այլ՝ հատելով հռոմեական պետության սահմանը, անցել է Եդեսիա: Դժվար է ասել, թե արդյո՞ք այդ քայլը նշանակում է, որ նա, Մծբինում եղած ժամանակ, հայկական աղբյուրների գոյության մասին նոր տվյալներ է ստացել, թե այդ այցելությունը պլանավորված է եղել դեռևս տանը եղած ժամանակ: Փաստն այն է, որ Եդեսիայում Մաշտոցը դիմել է այդ քաղաքի դիվանի «իշ-

¹⁰ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 2, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 67-68, 96-102, 111-125, 216, 232: *Аммиан Марцеллин*. Римская история. В переводе на русский язык Ю. Куликовского и А. Сонни. Киев, 1906-1908.

¹¹ Տե՛ս *Սովսես Խորենացի*, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1981, էջ 402 (403):

¹² Տե՛ս *Կորյունի* «Վարք Մաշտոցի» գրքի առաջաբանը, էջ 39-40: *Լեո*, Մեսրոպ Մաշտոց, էջ 62:

խան», այն է՝ արխիվի և քաղաքային գրադարանի պետ, հեթանոս ճարտասան Պղատոնին: Ի՞նչ նպատակով է նա դիմել Պղատոնին՝ ոչ Խորենացու, ոչ էլ Կորյունի գրքում որոշակի բան պարզ ասված չէ: Բացի դրանից, Խորենացու գրքի այդ հատվածի թարգմանությունը գրաբարից բավարար ճշտությամբ չի կատարվել: Համեմայնդեպս, այնտեղ բառացիորեն գրված է հետևյալը. «Եւ նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ, և շատ ջանացեալ և ոչ օգտեալ՝ զտգիտութիւն խոստովանեաց հռետորն: Եւ զայլ ոմն ասելով յոյժ հասու, վարդապետ իւր եղեալ յառաջագոյն, և ապա առեալ զճարտարացն գրեան ի նոյն դիվանէն Եղեսեայ, և գնացեալ քրիստոնէութեան հաւատաց, որոյ անուն Եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափագդ քո»¹³:

Ինչպես ևս մեկ անգամ պարզ է դառնում այս տողերից, նա Եղեսիա չէր եկել տառեր հորինելու: Այստեղ իրականում խոսքն այն մասին է, որ Մաշտոցը որոնելիս է եղել հայերենով գրված կամ հայերի կողմից գրված գրքեր, և միայն դրանք իրեն ներկայացնելու խնդրանքով է դիմել ճարտասան Պղատոնին, և ոչ թե մեկ այլ, ասենք՝ իրեն հայերեն տառեր տալու, այդ տառերը հորինելու մեջ իրեն օգնելու կամ իրեն ապրելու տեղ, աշխատասենյակ տրամադրելու խնդրանքով: Վերջինս էլ՝ որոնելով («շատ ջանացեալ») դրանք, դիվանում չի գտել: Դրանից հետո՝ խոստովանելով իր «տգիտությունը», այն է՝ հայկական աղբյուրներ, դրանց մասին ճիշտ տեղեկություններ չունենալը և հայերեն չիմանալը, նա Մաշտոցին հայտնել է, որ ինքն ունեցել է Եպիփանոս անունով մի ուսուցիչ, որն այդ նույն դիվանից վերցնելով «ճարտարների գրվածքները», գնացել է Սամոս, և միայն նրան գտնելուց հետո Մաշտոցը կարող է «լցուցանել» իր փափագը, այն է՝ հասնել իր նպատակին՝ գտնելով «ճարտարների» գրվածքները: Խորհրդանշական է, որ Մ. Խորենացին Պղատոնին կոչում է ճարտասան, այսինքն՝ ուրիշի գրածները ճարտարորեն արտասանող, իսկ նրանց, ում գրքերն իր հետ տարել էր Եպիփանոսը՝ ճարտարներ, այսինքն՝ ստեղծագործող փիլիսոփաներ, գրողներ, գիտուններ: «Հաճախապատում ճառքում» ստեղծագործները, գրողները կոչվում են «ճարտարագործներ»¹⁴: Ագաթանգեղոսի գրքի 778 պարբերության մեջ էլ Տիր Աստծու տաճարը կոչվում է «ուսման ճարտարութեան մեհեան», քրմերի «դպրության գիտության ուսման տեղ», որում ուսումնասիրելիս են եղել «քրմական գիտությունը», այն է՝ Ավեստան և ստեղծագործել¹⁵: Խորենացին չի պարզաբանում, թե որ ճարտարների մասին է խոսքը, բայց միանշանակ է, որ Մաշտոցը եկել էր Միջագետք ոչ թե, ասենք, հույն կամ ասորի ճարտարների գրքեր որոնելու, այլ միայն հայ, իսկ այնպիսիներ, որոնց այդ ժամանակ կարելի էր անվանել հայ ճարտասան, և որոնք նախորդած լինեին Մաշտոցին և Սահակին, եղել են միայն Գ. Լուսավորիչն ու Ագաթանգեղոսը:

¹³ Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1981, էջ 404 (405):

¹⁴ Տե՛ս Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 30, 69:

¹⁵ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 436: **Ս. Ա. Խաչատրյան**, Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը... Երևան, 2010, էջ 30-31:

Այնուհետև, Խորենացին գրում է, որ Մեսրոպը՝ շարունակելով որոնումները, «Բաբիլոս եպիսկոպոսից օգնություն գտնելով՝ Փյունիկեով անցնում դիմում է Սամոս» կղզի, որտեղ, ըստ Պղատոնի, քրիստոնեություն ընդունելով՝ հեռացած է եղել Եպիփանոսը՝ հետը տանելով ճարտարների գրքերը: «Կղզի» անունը Խորենացու մոտ բացակայում է, բայց պարզ է, որ Փյունիկիայից նա կարող էր միայն հունական Սամոս կղզի գնալ և ոչ թե Միջագետքի Սամոսատ քաղաքը: Այս փաստի վրա Աբեղյանը ոչ մի ուշադրություն չի դարձրել՝ ձևացնելով, որ խոսքը տվյալ դեպքում Սամոսատ քաղաքի մասին է, Իսկ Ջարբհանալյանը ուղղակի ենթադրում է, որ նա գնացել է Փյունիկիա և հետո ետ եկել Սամոսատ¹⁶, բայց դա այդպես չէ: Եդեսիայից կամ Ամիդից Փյունիկիայով Սամոսատ չեն գնում: Մաշտոցն էլ Սամոսատով պարտադիր անցնելով՝ գնացել է Փյունիկիա, այնտեղից էլ նավով՝ Սամոս: Իսկ որ Խորենացին հրաշալի գիտեր Սամոսի և Սամոսատի տարբերությունը և չի շփոթել դրանք, բացատրել պետք չէ: Նա իր գրքում այդ քաղաքը հիշատակում է ոչ թե հունական Սամոսատ, այլ հայկական Շամշատ ձևով, որն առկա է նրա «Պատմության» երկրորդ գրքի «ԻԱ» գլխի վերնագրում և բուն գլխում¹⁷:

Այսպիսով, Մաշտոցը, իսկապես, գնացել է Սամոս կղզի, որտեղ հայ ճարտարների երկերը տարել էր Եպիփանոսը, և որը խնամքով թաքցնում է Կորյունը: Եպիփանոսն արդեն մահացած է լինում, բայց Սամոսում Մաշտոցը գտնում է նրա աշակերտ Զոփանոսին: Խորենացին գրում է, որ Մաշտոցը Զոփանոսից էլ «շահ չգտնելով՝ ապավինում է աղոթքի: Եւ տեսնում է «ոչ երազ քնի մեջ, ոչ տեսիլք արթնության մեջ» տառեր, որը գրում էր մի սուրբ «աջ ձեռքի թաթ»¹⁸: Դրանք էլ հայկական տառերն էին: Ինչպես տեսնում ենք, այստեղ Խորենացին կրկնում է տառերի գյուտի մասին Կորյունի հրաշքի վարկածը, բայց միայն այն տարբերությամբ, որ այն տեղի է ունենցել Սամոսում և նրա հետ այդ հարցում համաձայն է Ղազար Փարպեցին: Իսկ ինչ վերաբերում է տառերը գտնելու հրաշքին, որի մասին Խորենացին գիտի և կարող էր իմանալ միայն Կորյունի խոսքերից, քանզի դրա մասին այլ աղբյուր չկա, ապա այդ մասին նա ուրիշ բան չէր կարող գրել և հրաշքը հերքել: Հակառակ դեպքում նա կտար իրեն հալածելու մի պատճառ ևս: Բայց նա, բոլոր դեպքերում, տառերի գյուտը չի համարում հնարման արդյունք, այլ՝ «երկարատև դառն աշխատանքով» որոնելու-գտնելու, ինչպես որ առկա է նրա գրքում տեղ գտած Թեոդոս կայսերը Սահակ կաթողիկոսի գրած նամակում¹⁹:

Հարց է առաջանում, թե ինչո՞ւ է հանկարծ Եպիփանոսը թողել Եդեսիայի նման հսկայական քաղաքը, որտեղ ուներ աշխատանք և հեռացել Սամոս՝ հետը տանելով «ճարտարների» և այն էլ՝ հայ, գրվածքները: Այդ հարցի տրամաբանական պատասխանը, ըստ կորած օղակների վերականգնման մեթոդի, կարող է լինել հետևյալը. պարսիկները երկրներ գրավելիս՝ առաջին հերթին, ոչնչացնում

¹⁶ Տե՛ս **Գարեգին Ջարբհանալյան**, Հայոց հին դպրություն, Վենետիկ, 1932, էջ 35-36:

¹⁷ Տե՛ս **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 156 (157):

¹⁸ Տե՛ս **Մ. Խորենացի**, նույն տեղը:

¹⁹ Տե՛ս **Մ. Խորենացի**, նույն տեղը, էջ 414 (415): Պետք է ասել, որ այդ նամակներն էլ Խորենացու գրքի ծանոթագրողները անվերապահորեն համարում են նրա կողմից «հորինված»:

էին գրաված երկրների գրական աղբյուրները: Այդ ավանդույթը ձևավորվել էր այն բանից հետո, երբ Ա. Մակեդոնացին՝ գրավելով Իրանը, ոչնչացրել էր Ավեստան և իրանական գրական այլ աղբյուրները: Նրա օրինակով էլ պարսիկները, ինչպես նաև՝ հայերը, նույն կերպ էին վարվում: Հայ պատմիչների վկայությամբ Հայաստանն ավերելիս՝ սկսած 330 թվականից, պարսիկները նախ և առաջ գտել և ոչնչացրել են գրական հուշարձանները: Գ. Լուսավորիչը նույն կերպ է վարվել՝ ոչնչացնելով Երազմույնի Տիր Աստծու տաճարում հայտնաբերված գրական հուշարձանները, այդ թվում նաև՝ Ավեստան:

Եպիփանոսն ինքն ապրելիս է եղել Եդեսիայում այն ժամանակ, երբ Միջագետքը հայ-պարսկական, հռոմեա-պարսկական պատերազմների և բախումների թատերաբեմ էր՝ վարելով այդ քաղաքի դիվանապետի պաշտոնը: Նա պատահաբար Եդեսիայի դիվանում գտել է հայ «ճարտարների», այն է՝ Գր. Լուսավորչի ու Ագաթանգեղոսի հայերենով, և գուցե նաև այլ լեզուների թարգմանված նրանց աշխատությունները՝ «Հաճախապատում ճառքը», «Հայոց պատմությունը» և այլք, հասկացել է դրանց նշանակությունը, դրանց սպառնացող վտանգի չափը, և հնարավոր ոչնչացումից փրկելու համար փախցրել, տարել է ապահով տեղ՝ Սամոս կղզի: Իսկ այնտեղ դրանք Մաշտոցին է հանձնել Եպիփանոսի աշակերտ Հռոփանոսը: Դրանցից էլ պարզ է դարձել, թե ինչպիսին է իրականում եղել հայոց գիրը: Հռոփանոսի հետ, որը գծագրող և նկարիչ է եղել, Մաշտոցը մշակել, կատարելագործել է դրանք, երևի նաև՝ համեմատել Դանիելյան գրերի հետ և այլն: Գուցե նաև աջից ձախ գրվող գրերը նա դարձրել է ձախից աջ գրվող²⁰, լրացրել դրանց քանակը...: Բայց այդ մասին կարելի է միայն ենթադրություններ, և ոչ թե ապացույցներով հիմնավորված հետևություններ անել:

Այնուհետև, Խորենացին հաղորդում է, որ, Մաշտոցը, իր աշակերտների հետ, և փաստորեն՝ հենց Սամոս կղզում, սկսել է թարգմանել Աստվածաշունչը: Նա գրում է. «Եւ իսկույն ծեռնարկեցին թարգմանության, խորհրդաբար սկսելով (Սողոմոնի) Առակներից, ամբողջ քսաներկու հայտնի գրքերը և Նոր Կտակարանը փոխադրում է հայերեն լեզվի...»²¹: Այս տեղեկությունը ևս Խորենացին վերցրել է Կորյունի գրքից, քանզի այլ աղբյուր չունի: Կարևոր չէ, իհարկե, թե որտեղ է Մաշտոցն սկսել թարգմանել Աստվածաշունչը՝ Սամոսում, թե Սամոսատում, թե ավելի հավանականը Սամոս կղզին է: Հարցն իրականում նրանում է, թե հավանակա՞ն է արդյոք Աստվածաշնչի՝ Հին ու Նոր Կտակարանների, թարգմանությունը Մաշտոցի կողմից, Միջագետքում կամ Սամոս կղզում, թեկուզ միայն՝ Սողոմոնի Առակների: Դա չափազանց աշխատատար գործ է, որը պահանջում է օտարալեզու տեքստերի առկայություն, լեզուների իմացություն, տեքստերի համեմատում, համադրում և նոր միայն՝ թարգմանություն: Առավել ևս, հնարավոր էր արդյոք դա անել նոր՝ հրաշքով գտած Աստվածաշունչ տառերով և հայերեն գրավոր լեզվով, որի քերականությունը հայտնի չէր և պետք էր ժամանակ՝ այդ ամենը անելու համար: Եվ եթե ընդունենք Կորյունի հրաշքի վարկածը և համարենք, որ Մաշտոցը Հռոփանոսից չի ստացել Գ. Լուսավորչի «Հաճախապատում ճառքը», «Ասորա-հռոմեական օրենսգիրքը», Ագաթանգեղոսի երկերը, և նրանց

²⁰ Տե՛ս **Լեո**, Մեսրոպ Մաշտոց, ԵՊՀ հրատ., Երևան, 1962, էջ 62:

²¹ Տե՛ս **Սովսես Խորենացի**, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1981, էջ 404 (405):

կողմից ժամանակին հայերեն թարգմանած Աստվածաշունչը, և գուցե նաև՝ այլ գրքեր, ապա նման աշխատանք կատարելը միանշանակ անհավանական է թվում, նամանավանդ, որ նրա հետ եղած աշակետները օտար լեզուներ չգիտեին, նոր միայն պետք է դրանք սովորեին և թարգմանության գործին չէին կարող մասնակցել: Այս կապակցությամբ պետք է նաև ասել, որ դրանից 1100 տարի հետո Մարտին Լյութերը Նոր Կտակարանը գերմաներեն է թարգմանել մեկ տարում, իսկ Դին Կտակարանը՝ շուրջ հինգ տարում (1529-1534), և այն էլ՝ ոչ թե մենակ, այլ Ֆ. Մելանխտոնի հետ համատեղ՝ ծեռքի տակ ունենալով դրա համար անհրաժեշտ բոլոր միջոցներն ու հնարավորությունները: Իսկ ի՞նչը կարող էր օտարության մեջ ստիպել Մաշտոցին սկսել թարգմանել Աստվածաշունչը, հատկապես, եթե չգիտեր, թե Աստվածաշնչից ինչը թարգմանել և ինչը՝ ոչ: Ոչինչ նրան չէր ստիպում դա անել, և դա նման ճանապարհորդության ժամանակ հնարավոր էլ չէր, մանավանդ՝ Կորյունի կողմից նշված ժամանակամիջոցում՝ մեկ տարում:

Բացի դրանից, Ս. Գրքի թարգմանությունը, հատկապես՝ Դին Կտակարանի, այն ժամանակ համարվում էր հերետիկոսություն և արգելված էր: Եվ դրա համար նույնպես առնվազն անհրաժեշտ էր հայ եկեղեցու տեղական համաժողովի որոշում կամ գոնե՝ կաթողիկոսի թույլտվություն: Իսկ նախորդ ժողովը, որը տեղի էր ունեցել մինչև նրան արտասահման գործուղելը, նվիրված էր եղել հայկական նշանագրեր որոնելուն, գտնելուն (և ոչ թե ստեղծելուն) և նրան Աստվածաշունչը թարգմանելու հանձնարարություն ու լիազորություն չէր տրվել, քանզի ոչ ոք չգիտեր, թե նա Միջագետքում տառեր գտնելու էր, թե ոչ²²: Նման քայլը կարող էր նաև դժգոհություն հարուցել ինչպես հայկական, այնպես էլ այլ եկեղեցիների հայրերի մոտ: Բացի դրանից, խնդիր էր նաև հայկական համապատասխան բարբառի ընտրությունը, որով պետք է թարգմանությունը կատարվեր, ինչը նույնպես լուրջ ներեկեղեցական-պետական հարց էր: Մաշտոցն ինքը ինքնուրույն կերպով բարբառի ընտրություն չէր կարող կատարել և նման լիազորություն չուներ: Չպետք է մոռանալ, որ նա ընդամենը վարդապետ էր և նման կարևորության հարցեր չէր կարող լուծել:

Իսկ որ Մաշտոցն իր հետ հայերեն Աստվածաշունչ է արտասահմանից բերել, դա փաստ է: Այն երբեմն անվանում են ասորական լեզվից հապճեպ թարգմանված նախնական օրինակ: Բայց դա չի եղել Մաշտոցի կողմից թարգմանված, այլ ընդամենը՝ հայտնաբերված, և դա եղել է Գր. Լուսավորչի կողմից «հապճեպ» թարգմանած և ավեստական-հայկական տառերով գրված Ա-շունչը: Այն չի հասել մեր օրերը, բայց նման Աստվածաշնչի գոյության մասին են խոսում նաև «Հաճախապատում ճառքի» և Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ տեղ գտած Ա-շնչից կատարված մեջբերումները, որոնցից գրեթե ոչ մեկը (շուրջ 95 տոկոսը) չի համընկնում Սահակ-Մեսրոպյան Ա-շնչի համապատասխան տների հետ՝ այն Ա-շնչի, որը թարգմանվել-ստեղծվել է Մաշտոցի վերադառնալուց հետո: Միաժամանակ Ագաթանգեղոսի գիրքը նրանց կողմից Սամոսում հայտնաբերելու մասին է խոսում դրա ու Կորյունի գրքի մեջ տեղ գտած նույնությունների առկայությունը, նրա կողմից անհարկի կերպով Ա-շնչից կատարված մեջբերումների առատությունը՝ մի գրելածն, որը բնորոշ է Գ. Լուսավորչի ու Ագաթանգեղո-

²² Տե՛ս **Կորյուն**, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով՝ Ս. Աբելյանի, Երևան, 1962:

սի աշխատություններին:

Գրավոր Ա-շունչ հայերեն լեզվով անապայման եղել է 298-301թթ. հայկական քրիստոնեական «գրանդիոզ», մեծ, դարակազմիկ հեղափոխության ժամանակ, և դրա ճշտության մեջ, ինչպես տեսնում ենք, դույզն իսկ կասկածել չի կարելի: Առանց հայերեն Աստվածաշնչի, Գր. Լուսավորչի օրենսգրքի, որն հայտնի է «Ասորահռոմեական Դատաստանագիրք» անվամբ, առանց նրա «Հաճախապատում ճառքի» և Ագաթանգեղոսի երկերի, այն է՝ առանց գաղափարական հիմնավորման և նոր օրենսգրքի, պարզապես անհնար էր ստեղծել նոր՝ աշխարհում առաջին, քրիստոնեական պետությունը: Եվ նրանք այդ երկերը ժամանակին ստեղծած են եղել՝ սրբագերծելով Տիր աստծու տաճարում հայտնաբերած Ավեստայի տառերը:

Այսպիսով, կարելի է հիմնավորված կերպով պնդել, որ Մ. Մաշտոցը արտասահման է գնացել ոչ թե հայոց նշանագրեր հորինելու, այլ դրանք և Գր. Լուսավորչի, Ագաթանգեղոսի երկերը որոնելու, և դրանք հայտնաբերել է Սամոս կղզում:

СНОВА К ВОПРОСУ О СОЗДАНИИ АРМЯНСКОГО АЛФАВИТА

С. А. Хачатрян

В статье приводятся доказательства того, что Месроп Маштоц не является создателем армянского алфавита. Он лишь нашел на острове Самос книги Григора Просветителя и Агатангелоса и на их основе воссоздал армянскую письменность.

ON THE CREATION OF THE ARMENIAN ALPHABET AGAIN

S. A. Khachatryan

The article brings evidence that Mesrop Mashtots is not the creator of the Armenian alphabet. He only discovered the books written by Gregory the Illuminator and Agatangehos in Armenian, brought them to Great Armenia and thus recreated the Armenian written language.